ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արմինե Ալավերդյան, Անի Թաթոյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Արմինե Ալավերդյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ:
   Անի Թաթոյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի ավագ մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Նիդերլանդների Թագավորություն, Հաագա, 2024 թվականի նոյեմբերի 3-ից 7-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   ՕքսԵՋեն հիմնադրամ:

5. **Գործուղման նպատակը.**

   Այցի հիմնական նպատակն էր ծանոթանալ ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ոլորտում Նիդերլանդներում գործող պետական և ոչ պետական կառույցների և վերջիններիս ներկայացուցիչների հիմնական գործառույթներին, Կառավարության որդեգրած քաղաքականություններին, պետական և ոչ պետական

մարմինների կողմից ոլորտում կիրառվող հիմնական գործիքակազմերին, գրանցած հաջողություններին ու առկա մարտահրավերներին:

6. Քննարկված թեմաները.

Ուսումնական այցի ընթացքում քննարկվել են Ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի գործընթացում ներառված պետական և ոչ պետական մարմիններին առնչվող հետևյալ հարցերը՝

- Գենդերային բռնությունը եվրոպական համատեքստում. օգտագործելով միջազգային ուղեցույցները որպես իրազեկման գործիք, գենդերային բռնության վերաբերյալ լավագույն փորձերը,
- Նիդերլանդների պրոբացիոն ծառայությունը և ընտանեկան բռնության դեպքերի նկատմամբ մոտեցումը,
- Գենդերային բռնությունը Նիդերլանդներում, ՀԿ-ների ազդեցությունը քաղաքականության վրա, Նիդերլանդներում հանդիպող մարտահրավերները,
- Ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և ապաստարանների գործունեության, պարտականությունների ու լիազորությունների հիմնական շրջանակը,
- Համայնքի ղեկավարի դերը ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցության և բռնարարների հետ տարվող աշխատանքների համատեքստում:
- Կանանց դեմ տղամարդկանց բռնության վերաբերյալ գիտելիքների ազգային կենտրոնի կողմից առաջարկվող դասընթացներն ու իրականացված հետազոտություններն ընտանեկան բռնության դեպքերի ու դրանց տարաբնույթ դրսևորումների առնչությամբ,

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպումների ընթացքում վերոնշյալ բոլոր կառույցների ներկայացուցիչները հանդես են եկել զեկույցներով՝ մանրամասնորեն անդրադարձ կատարելով ինչպես կառույցների ընդհանուր գործունեությանը, այնպես էլ ոլորտում առկա խնդիրներին ու մարտահրավերներին և դրանց լուծմանն ուղղված գործողություններին: Ուսումնական այցի շրջանակում կազմակերպվել են այցելություններ հետևյալ կենտրոններ՝

- Այցելություն Նիդերլանդների ոստիկանության Հաագայի շտաբ՝ իրենց շղթայական համագործակցության և ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ քննարկում ունենալու նպատակով,

- Այցելություն Femmes For Freedom-ի (Կանայք հանուն ազատության) գրասենյակ՝ քննարկելու գենդերային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում առկա խնդիրները Նիդերլանդներում,

- Այցելություն Հաագայի քաղաքապետարան, որտեղ ներկայացվել է, թե ինչպես է աշխատում ընտանեկան բռնության դեմ պայքարի բաժինը և ինչպես է համագործակցում այլ կառույցների հետ,

- Այցելություն գենդերային բռնության ենթարկվածների կացարան՝ կենտրոնացում բարդ դեպքերի վրա,

- Այցելություն "Ռոզա Մանուս" գենդերային բռնության ենթարկվածների կացարան՝ ծանոթացում աշխատանքների բնույթին, այդ թվում՝ աշխատանք բռնարարների և երեխաների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

- **Ռեաբիլիտացիոն ծրագրերի ներդրում**

Առաջարկում ենք Հայաստանում ներդնել ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ռեաբիլիտացիոն ծրագրերի Նիդերլանդների մոդելը՝ հիմնված մասնագիտական աջակցության և հոգեբանական վերականգնման վրա: Այս մոդելը կնպաստի բռնության ենթարկված անձանց ինքնագնահատականի վերականգնմանը և կենսական մարտահրավերների հետ գործ ունենալուն:

- **Պրոբացիոն ծառայության ներգրավում**

Նախագծել և իրականացնել նոր մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան պրոբացիոն ծառայության ներգրավվել ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման գործընթացում: Նիդերլանդներում պրոբացիոն ծառայության դրական փորձը կարող է կիրառվել Հայաստանում՝ հետագայում նվազեցնելով կրկնակի բռնության դեպքերի քանակը:

- **Համայնքների մասնակցության խթանում**

Առաջարկում ենք համայնքների ղեկավարների դերակատարությունը ընդլայնել՝ նպատակ ունենալով ակտիվորեն ներգրավվել բռնության ենթարկված անձանց աջակցության և բռնարարների հետ տարվող աշխատանքներում: Նիդերլանդներում համայնքային համակարգը ցույց է տվել իր արդյունավետությունը՝ հատկապես հոգեբանական աջակցություն ցուցաբերելու և ապաստարանների հետ համագործակցելու տեսանկյունից:

- **Աջակցության կենտրոնների և ապաստարանների հնարավորությունների զարգացում**

Առաջարկում ենք բարելավել Հայաստանում գործող աջակցության կենտրոնների հնարավորությունները, ներդնել շարունակական վերապատրաստման ծրագրեր և կատարելագործել բռնության

ենթարկված անձանց մատուցվող ծառայությունները՝ հիմնվելով Նիդերլանդների մոդելի վրա:

- **Հանրային իրազեկման և կրթության ծրագրերի մշակումը**

Կարծում ենք, որ անհրաժեշտ է ներդնել հանրային իրազեկման և կրթական նոր ծրագրեր՝ ուղղված ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելմանը: Կարելի է օգտվել Նիդերլանդների լավագույն օրինակներից՝ իրազեկման արշավների ձևաչափի և գործիքների մեջ:

- **Միջազգային համագործակցության ամրապնդում**

Նիդերլանդների համապատասխան կառույցների հետ համագործակցությունը կարող է նպաստել գիտելիքների փոխանակմանն ու երկու երկրների միջև փորձի կիրառմանը: Առաջարկում ենք խորացնել մեր կապերը՝ ապագա համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ստորագրությունը	**Ամսաթիվը**
Արմինե Ալավերդյան	**14.11.2024 թ.**
Անի Թաթոյան	